ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N_____ Ա «11» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թ.

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9», «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/17» ԵՎ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/35» ԾԱԾԿԱԳՐՐԵՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ- ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՆ ՔԿ ծառայություն) և «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 13.12.2024թ.-ին կնքվել է ապրանքների մատակարարման «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9-5», 26.12.2024թ.-ին «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-3» և 10.04.2025թ.-ին «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/35-2» ծածկագրերով պայմանագրերը «ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության կարիքների համար ապրանքներ մատակարարելու վերաբերյալ», որոնց գումարը կազմել է համապատասխանաբար՝ 1.793.709 ՀՀ դրամ, 9.514.511,24 ՀՀ դրամ և 11.465.554 ՀՀ դրամ:

Կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9-5» ծածկագրով Պայմանագրի կատարման ընթացքում Կատարողի կողմից թույլ են տրվել պայմանագրի պարտադիր պայմանի խախտում, մասնավորապես. ըստ պայմանագրի՝ «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ն սույն թվականի 1-ին եռամսյակի ընթացքում, պարտավորվել էր մատակարարել սրբիչ բամբակյա 6000 հատ քանակով, սակայն մինչ օրս մատակարարվել է 5850 հատ քանակով և 3-րդ եռամսյակի ընթացքում պարտավորվել էր մատակարարել

սրբիչ բամբակյա 6000 հատ քանակով, որը մինչ օրս չի մատակարարվել և դրանց ընդհանուր արժեքը կազմում է 1.793.709 ՀՀ դրամ:

Կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-3» ծածկագրով Պայմանագրի կատարման ընթացքում Կատարողի կողմից թույլ են տրվել պայմանագրի պարտադիր պայմանի խախտում, մասնավորապես. ըստ պայմանագրի՝ «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ն սույն թվականի 1-ին եռամսյակի ընթացքում պարտավորվել էր մատակարարել դաշտային կարճաթև վերնաշապիկ և տաբատ 750 հատ, դաշտային կոստյում՝ կեպիով, կիսաբամբակյա, գունաքողարկված, անջրանցիկ կտորից 700 հատ, 2-րդ եռամսյակի ընթացքում պարտավորվել էր մատակարարել կարճաթև վերնաշապիկ 500 հատ, կեպի 650 հատ քանակով, 3-րդ եռամսյակի ընթացքում պարտավորվել էր մատակարարելականջակալներով ձմեռային գլխարկ 900 հատ, սակայն մինչ օրս վերը նշված ապրանքներից մատակարարվել է միայն՝ դաշտային կարճաթև վերնաշապիկ և տաբատ 750 հատ և դաշտային կոստյում՝ կեպիով, կիսաբամբակյա, գունաքողարկված, անջրանցիկ կտորից 316 հատ: Չմատակարարված ապրանքների ընդհանուր արժեքը կազմում է 9.514.511,24 ՀՀ դրամ:

Կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/35-2» ծածկագրով Պայմանագրի կատարման ընթացքում Կատարողի կողմից թույլ են տրվել պայմանագրի պարտադիր պայմանի խախտում, մասնավորապես. ըստ պայմանագրի՝ «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ն սույն թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում, պարտավորվել էր մատակարարել ամառային կարճաթև վերնաշապիկ և տաբատ 1800 հատ, 3-րդ եռամսյակի ընթացքում կիսաբրդյա բաճկոն և ազատող փողքերով տաբատ 160 լրակազմ քանակով, սակայն վերը նշված ապրանքների մատակարարումներ չեն իրականացվել: Չմատակարարված ապրանքների ընդհանուր արժեքը կազմում է 11.465.554 ՀՀ դրամ:

Վերը նշված երեք պայմանագրերի կատարման արդյունքում՝ «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել պայմանագրային պարտավորությունների խախտում՝ խախտվել է ապրանքների մատակարարման ժամանակացույցերը, ուստի ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրերի 2.1.7 կետերը՝ ՀՀ ԱՆ ՔԿ ծառայությունը **2025թ.-ի նոյեմբերի 27-ին, միակողմանի լուծել է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ի միջև 13.12.2024թ.-ին կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9-5» ծածկագրով պայմանագիրը՝ 1.793.709 (մեկ միլիոն յոթ**

**հարյուր իննսուներեք հազար յոթ հարյուր ինը) ՀՀ դրամի չափով, 26.12.2024թ.-ին կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-3» ծածկագրով պայմանագիրը՝ 9.514.511,24 (ինը միլիոն հինգ հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր տասնմեկ ամբողջ քսանչորս հարյուրերորդական) ՀՀ դրամի չափով և 10.04.2025թ.-ին կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/35-2» ծածկագրով պայմանագիրը՝ 11.465.554 (տասնմեկ միլիոն չորս հարյուր վաթսունհինգ հազար հինգ հարյուր հիսունչորս) ՀՀ դրամի չափով:**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ն, սահմանված ժամկետում չի վճարել որակավորման և պայմանագրի ապահովման գումարներն, ուստի համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ կետի ա/ ենթակետի՝ «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ին պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 2-րդ մասի պահանջներով.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝**

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքի առկայությունը՝ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին՝ «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ին, ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի ծածկագիրը | Պայմանագրի | | | | | Պայմանագրի կողմի /մատակարար, կատարող, կապալառու/ | | | Պատվիրատուի անվանումը | Պայմանագիրը Լուծելու վերաբերյալ Ծանուցումը Հրապարակելու Ամսաթիվը | Իրավական հիմքը | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ծածկագիրը | Չափաբաժնի համարը | Գնման առարկայի անվանումը | Չափաբաժնի գնման գինը /ՀՀ դրամ/ | Չափաբաժնի գինը /ՀՀ դրամ/ | Անվանումը | ՀՎՀՀ | Գործունեության հասցեն | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9» | «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9-5» | 6 | սրբիչ բամբակյա | 6600000 | 3500000 | «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ | 01063649 | ՀՀ Ք. Երևան, Բաբաջանյան փողոց 39/313 | ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն | 27.11.2025թ. | Պայմանագրի 2.1.7 կետը | - |
| «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/17» | «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-3» | 6 | դաշտային կոստյում՝ կեպիով, կիսաբամբակյա, գունաքող արկված, անջրանցիկ կտորից, | 8400000 | 5173777 | «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ | 01063649 | ՀՀ Ք. Երևան, Բաբաջանյան փողոց 39/313 | ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն | 27.11.2025թ. | Պայմանագրի 2.1.7 կետը | - |
| | | 14 | երկարաթև վերնաշապիկ, | 2000000 | 1231777 | | | | | | | |
| | | 22 | կեպի | 1950000 | 1231777 | | | | | | | |
| | | 26 | ականջակալներով ձմեռային գլխարկ | 6840000 | 4212777 | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/35» | «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/35-2» | 2 | ամառային կարճաթև վերնաշապիկ և տաբատ | 16200000 | 9447777 | «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ | 01063649 | ՀՀ Ք. Երևան, Բաբաջանյան փողոց 39/313 | ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն | 27.11.2025թ. | Պայմանագրի 2.1.7 կետը | - |
| | | 4 | կիսաբրդյա բաճկոն և ազատթող փողքերով տաբատ | 3016000 | 2017777 | | | | | | | |

ՏԻԳՐԱՆ ԻԳԻԹՅԱՆ